ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<25>> հուլիսի 2014թ. N 61 - Ա

ք. Արմավիր

ՓԱՌԱՆՁԵՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ, 161-րդ, 164-րդ հոդվածներով, 167-րդ հոդվածի երրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշման 1 հավելվածի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի նոյեմբերի 5-ի N 487 որոշման 1-ին կետի <<բ>> ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 28-ի N 107-Ա կարգադրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2014 թվականի հուլիսի 25-ի դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը.

կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փառանձեմ Կարապետյանին տրամադրել 2014 թվականի ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդները 29 աշխատանքային /20 նվազագույն, 4 լրացուցիչ, 5 լրացուցիչ/ օր և 2013 թվականի իր հերթական արձակուրդի չօգտագործված մասը՝ 12 աշխատանքային օր տևողությամբ, 2014 թվականի օգոստոսի 5-ից սեպտեմբերի 30-ը ներառյալ:
2. Փառանձեմ Կարապետյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում աշխատակազմի ղեկավարի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Արամ Հովհաննիսյանին:
3. Փառանձեմ Կարապետյանին աշխատանքի մեջ համարել 2014 թվականի հոկտեմբերի 1-ից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ